ՀՏԴ 37.02:159.92
Մանկավարժություն

Հասմիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վանաձորի պետական համալսարան, մանկավարժության ամբիոնի հայցորդ, ՀՀ, ք. Վանաձոր
E-mail: hasmik.xachatryan.79@mail.ru

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԸ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Հոդվածում անդրադարձ է կատարվել միջառարկայական կապն ապահովելու անհրաժեշտությանը և կարևորությանը, քննվել են այդ կապի շրջանակներում խոսքի զարգացմանը նպաստող հանգամանքները, կարևորվել է ուսուցման գործընթացում դրա ապահովման դերը և նշանակությունը, քանի որ բոլոր դասերին և դասի յուրաքանչյուր փուլում սովորողների մեջ հնարավոր է զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները: Առաջարկվել են մի քանի մեթոդներ միջառարկայական կապի շրջանակներում խոսքի զարգացմանը միտված աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար:

Կարծում ենք, որ աշակերտի խոսքի զարգացումը կլինի լիարժեք, եթե այն դառնա դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների, ուսուցչական ողջ կոլեկտիվի նպատակը, եթե դպրոցում հաստատվի խոսքի ընդհանուր և միասնական համակարգ և հետևողականորեն պահպանվի ուսումնական ողջ գործընթացի ժամանակ: Երեխան, քայլ առ քայլ հետևելով մարդկության զարգացման գործընթացին, պետք է ծանոթանա մարդկության մտքի պատմությանը, իմանա, թե ինչպես է մարդը սովորել մտածել, ստեղծել, ձևափոխել ու բարելավել իր կյանքի պայմանները, հասել գիտակցական այսօրվա մակարդակին: Մտածող և գիտակից սերունդ դաստիարակելու նպատակով անհրաժեշտ է ճիշտ և նպատակային կազմակերպել ուսուցման գործընթացը, սովորողների մեջ զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները բոլոր դասերին և դասի յուրաքանչյուր փուլում, ինչը մեծապես կնպաստի խոսքի զարգացման և հաղորդակցվելու կարողության ձևավորմանը:

Բանալի բառեր՝ *բառ – տերմին, բառապաշար, համակողմանի գիտելիք, աշխարհաճանաչողություն, համակողմանի զարգացում, աշխարհի միասնական պատկեր, սովորելու մոտիվացիա:*

А. Хачатрян

МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ В ПРОЦЕССЕ РАЗВИТИЯ РЕЧИ

В статье рассматривается необходимость и важность обеспечения межпредметных связей в процессе обучения, были исследованы условия, способствующие развитию речи в рамках этих связей, отмечена важность значения и роль для его реализации, т.к. на уроках и на каждом отдельном его этапе среди учащихся возможно развить способность познания жизни, повысить их активность и творческие способности. Для успешной организации работы по развитию речи в рамках межпредметных связей было предложено несколько методов, рассмотренных в данной статье.

На наш взгляд развитие речи ученика будет полноценным в том случае, если станет целью дисциплин и всего учительского коллектива, в школе установится общая и единая система речи, которая будет последовательно соблюдатся на всех этапах учебного процесса. Шаг за шагом следуя за процессом развития человека, ребенок должен ознакомиться с историей человеческой мысли, узнать как человек научился думать, создавать, менять и улучшать условия жизни и достиг до сегодняшнего уровня сознания. Для воспитания думающего и сознательного поколения нужна правильная и целенаправленная организация процесса обучения, развитие способности познания жизни на всех уроках и на всех этапах урока, что поспособствует развитию речи и формированию коммуникативного навыка.

Ключевые слова: *слово-термин, лексический запас, всестороннее знание, мировоззрение, всестороннее развитие, единая картина мира, мотивация к учебе.*

H.Khachatryan

INTERSUBJECT COHERENCE IN THE PROCESS OF SPEECH DEVELOPMENT

The article touches upon the importance and necessity of the intersubject coherence, It discusses the consequances promoting speech development within the bounderies of this coherence, emphasizes its role and meaning in the educational process, since during each phase of the lesson and during each lesson it's possible to develop students' cognitive competences towards life, to raise their activeness and creative skills . Some methods to effectively earalize speech development are suggested within the bounderies of the intersubject coherence.

We think that the students' speech development will be perfect if it becomes the aim of the school teaching staff for all the subjects, if a general and united system of speech is established and consistently followed during the whole learning process, Following the evaluation of humanity step by step the child should get acquainted with the history of human thought, how the human started thinking, creating modifying and improving their life conditions and how they got to their present conscious level. In order to bring up knowledgable and intellectual generation the teaching process should be organized in a right and purposeful way, students' life cognitive skills should be developed during all the lessons and during each phase of the lessons, wich will greatly promote speech development and form communicative ability.

Keywords: *term, word stock, intensive knowledge, world perception, intensive development, unificd image of the world, learning motivation*

Խելքը ոչ միայն գիտելիքն է, այլ այդ գիտելիքը ճիշտ օգտագործելու ունակությունը
Արիստոտել

Խոսքի ձևավորման և զարգացման բարդ գործընթացն իրականանում է մարդու գիտակցության մեջ՝ արտաքին աշխարհի ազդեցությամբ՝ սկսած նրա կյանքի առաջին ամիսներից և շարունակվելով ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացը դեռևս վաղ տարիքից պետք է իրականացվի ու վերահսկվի համապատասխան պայմաններում՝ տնից անցնելով մանկապարտեզ, դպրոց և այսպես շարունակ, քանի որ ողջ կյանքի ընթացքում մարդը շարունակում է կրթվել ու զարգանալ: Որքան լայնորեն ու բազմակողմանիորեն է իրականացվում այս գործընթացը, որքան ճիշտ են կազմակերպվում խոսքի և մտածողության զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները, այնքան ակտիվ ու գրագետ է ձևավորվում երեխայի խոսքը:

Հանրակրթական դպրոցի առաջնահերթ խնդիրն է դաստիարակել կրթված ու համակողմանիորեն զարգացած նոր սերունդ, որը պետք է ձևավորի վաղվա հասարակությունը, իրեն դրսևորի սոցիալական միջավայրում, հետևաբար այս խնդիրը պետք է լինի դպրոցական ամբողջ համակարգի ուշադրության կենտրոնում, կրթական նպատակները պետք է լինեն ընդհանուր՝ հիմնված բոլոր առարկաների և նրանց ուսուցման մեթոդների վրա: Այդ նպատակով տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչների կողմից պետք է մշակվի խոսքի զարգացման համատեղ ծրագիր: Ուսուցիչներից յուրաքանչյուրը կարող է ներկայացնել իր առաջարկները՝ միտված խոսքի զարգացման միասնական աշխատանքների կազմակերպմանը, որոնք քննարկելուց և վերլուծելուց հետո կընտրվի առավել արդյունավետը, կմշակվի մեկ միասնական ծրագիր՝ խոսքի զարգացման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Մենք գտնում ենք, որ խոսքի զարգացման ուղղությամբ պետք է ձևավորվի համակարգված մեթոդական շղթա և կիրառվի բոլոր առարկաների դասընթացների ժամանակ:

Մարդն իր մտքերն ու զգացմունքներն արտահայտում է տարբեր դրսևորումներով՝ գրական ստեղծագործությունների, երաժշտության, նկարների, քանդակների, այլ նյութական ու հոգևոր մշակութային արժեքների: Սակայն այդ մտքերի արտահայտումը, անկախ նրանից, թե ինչ ձևով է դա իրականացվում, հիմքում, խորքային առումով, լեզվական պատկեր ունի, որովհետև մտքի լիարժեք արտահայտման ձևը լեզուն է, որը մարդուն անհրաժեշտ է ոչ միայն ուրիշների, այլ նաև հենց իր սեփական մտքերը հասկանալու համար: Բառերն ու դրանց կապակցությունները միջոց են արտահայտելու արտաքին աշխարհի բոլոր իրերն ու երևույթները, և եթե հաշվի առնենք՝ միջառարկայական կապի շրջանակներում որքան են ամեն բնագավառին հատուկ բառ-

անվանումները, ապա պարզ կդառնա, թե որքան կարող են զարգանալ երեխայի բառապաշարը, լեզվական կարողությունները, գիտակցությունը և որքան համապարփակ նա կարող է ներկայացնել շրջապատող աշխարհի երևույթները: Ուստի ուսուցիչներն իրենց կողմից դասավանդվող առարկաների շրջանակներում հետևողականորեն պետք է հարստացնեն աշակերտների բառապաշարը, զարգացնեն խոսքը, քանի որ այն կարող է դառնալ հզոր միջոց աշակերտի գիտակցության բարձրացման, անձի ձևավորման գործում: Խոսքը կարևոր դեր ունի մարդու իմացության բնագավառում, և աշակերտը պետք է ըմբռնի այդ դերի կարևորությունը:

Աշխարհի ճանաչողությունը անվերջ գործընթաց է. մարդը, մարդկային իմացությունը զարգանում են աստիճանաբար, ողջ կյանքի ընթացքում, նրա գիտելիքները ևս հարստանում են աստիճանաբար, ուստի դրան պետք է նպաստեն դպրոցի բոլոր առարկաները, քանի որ մարդկային ճանաչողության սահմանների ընդլայնումը համակողմանիորեն զարգանալու հնարավորություն է տալիս աշակերտին, նրա բազմակողմանի զարգացածությունը ձևավորում է վերլուծական մտածողություն, ինչի շնորհիվ նրա խոսքը ևս դառնում է տրամաբանված, հաղորդակցումը՝ ավելի հեշտ: Լիարժեք ուսումնասիրելով դպրոցական բոլոր առարկաները՝ աշակերտը հնարավորություն է ստանում աշխարհն ավելի լավ ճանաչելու, խորանալու իրերի և երևույթների մեջ: Տարբեր նյութերի և փաստերի տիրապետող աշակերտը ցանկանում է դրանց մասին խոսել, նրա լեզուն դառնում է ավելի հարուստ ու գեղեցիկ: Տարբեր առարկաների ուսուցման ընթացքում ներկայացվում է յուրաքանչյուր առարկայի կապը կյանքի հետ, թե տվյալ առարկայից ստացված գիտելիքները ինչպես կարելի է կիրառել կյանքում, այս դեպքում միայն աշակերտը կհասկանա, թե ինչու պետք է սովորի, ինչն էլ կխթանի աշակերտի սովորելու ցանկությունը: Նրա սովորելը կլինի ոչ թե ինքնանպատակ, այլ նա կհասկանա, որ յուրաքանչյուր առարկա բանալի է՝ բացելու իր սահմանափակ անձնական փորձից այն կողմ ընկած օբյեկտիվ իրականության ճանաչողության դռները: Ուսանելով իրեն հասած մարդկության կենսափորձն ու նվաճումները՝ աշակերտը եզրահանգումներ է կատարում, դատում, վերլուծում և դրանց հիման վրա ստեղծում է նորը: Եվ բազմակողմանի զարգացած լինելու պարագայում միայն նրա ստեղծած նորը կլինի ավելի բազմաբովանդակ, ավելի հիմնավոր ու ընդունելի:

Դիդակտիկայի հայտնի սկզբունքներից է ուսուցման կապը կյանքի հետ, քանի որ ճանաչողության յուրաքանչյուր գործընթաց, այդ թվում աշակերտի իմացության գործընթացը, կատարվում է կենդանի հայեցողությունից դեպի վերացական մտածողություն, որն այնուհետև կիրառվում է գործնականում: Ուսուցումը կապել կյանքի հետ նշանակում է սովորել կյանքից, կյանքի համար, և այդ տեսակետից կարևոր է ուսուցման կրթադաստիարակչական նշանակությունը, կրթության և դաստիարակության միջև ներդաշնակ կապ հաստատելը: Դպրոցական

յուրաքանչյուր առարկայի ուսուցման գործընթացը, ուսուցողական նպատակներից բացի դաստիարակչական լուրջ խնդիրներ լուծելով, ձևավորում է աշակերտի աշխարհայացքը, գեղագիտական ճաշակը, նրանց մեջ սերմանում է աշխատասիրություն, ազնվություն, ճշտապահություն և բարոյականային այլ բարձր որակներ, նրանք ծանոթանում են էթիկայի նորմերին, դառնում հասարակության լիարժեք անդամ: Դպրոցի տարբեր առարկաներն այդ տեսակետից լայն հնարավորություն են ընձեռում հանրակրթության այդ նպատակն իրականացնելու համար: Ուսուցիչները պետք է համաչափ ու ներդաշնակ զուգակցեն միջառարկայական կապի շրջանակներում իրականացվող ուսուցումն ու դաստիարակությունը՝ գիտակցելով, որ ուսուցումը սոսկ գիտելիքների հանրագումար չէ, այլ այն պետք է համապատասխանի տեղեկատվական բազմազան աղբյուրներից օգտվող, շատ բան իմանալու ցանկությամբ օժտված այսօրվա աշակերտի հոգևոր պահանջներին: Մեր օրերի հագեցած առօրյան, ուսուցման նորագույն տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս ուսուցումն ավելի հետաքրքիր ու արդյունավետ կազմակերպելու: Ուստի ուսուցիչը ևս պետք է անընդհատ աշխատի իր վրա, շարժվի դարին համահունչ, որպեսզի կարողանա ճիշտ ուղղություն տալ իր սաներին, քանի որ «դիդակտիկան չի թողնում, որ հոգին զարգանա այնպես, ինչպես իրեն ցանկալի է, այլ նա աշխատում է հոգու էությանը համապատասխան որոշ ազդումների ճնշման տակ նրա զարգացման ընթացքը իր ձեռքը վերցնել»[1]:

Յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ, իր ներդրումն ունենալով աշակերտի խոսքի զարգացման գործում, պետք է կարողանա նրան սովորեցնել տրամաբանորեն մտածել և արտահայտել ճիշտ հաջորդականությամբ կապակցված մտքեր: Այդ նպատակով առաջնահերթ խնդիր է մեթոդական ձևերի ու հնարների ճիշտ ընտրությունը, որոնք առավել արդյունավետ կնպաստեն սովորողների խոսքի զարգացման վրա ողջ ուսումնադաստիարակչական գործունեության ընթացքում:

Խոսքի զարգացմանը միտված մեթոդների ընտրությունը կախված է ուսումնական առարկայի բարդությունից և բովանդակությունից: Մեթոդներ ընտրելիս կարևոր է արդյունավետության գործոնը, սովորողների ուսումնական հնարավորությունների՝ տարիքի, ունեցած գիտելիքների, պատրաստվածության մակարդակի, ունակությունների, կոլեկտիվի փոխհարաբերությունների հաշվառումը և այլն:

Աշակերտն օրական ունենում է 5-7 դասաժամ տարբեր առարկաներից և դրանցից յուրաքանչյուրի ժամին պետք է զարգացնել ճիշտ խոսքի հմտություններ, մտքերը կանոնավոր ու հստակ ձևակերպելու և արտահայտելու կարողություններ: Բոլոր ուսուցիչները պետք է լինեն հետևողական, կազմակերպեն համատեղ աշխատանք, մշակեն համապատասխան մեթոդական հնարներ, պլանավորեն իրենց համատեղ

---

[1] ***Էդիլյան Գ.***, *Դիդակտիկայի հիմունքները, «Արարատ»,1912, № 12, էջ 1089*

անելիքը, որպեսզի միասնական նպատակի արդյունքում կարողանան հասնել ցանկալի արդյունքի: Այդ աշխատանքն սկսվում է բառապաշարի հարստացմամբ, որի հիմքը դրվում է տարրական դասարանում բոլոր առարկաների դասաժամերին նոր սովորած բառերի ամրապնդմամբ և գործնականում դրանց կիրառման հմտությունների ձևավորմամբ: Յուրաքանչյուր նոր դաս գիտելիքների և կենսափորձի հարստացմանը զուգահեռ պետք է հարստացնի նաև աշակերտի բառապաշարը, ինչն ամուր հիմք է նրա խոսքի զարգացման համար: Դպրոցում ձևավորված բառապաշարը կազմում է աշակերտի հիմնական բառային ֆոնդը: Այն աստիճանաբար հարստանում է, ժամանակի ընթացքում խմբավորվում և համակարգվում իմաստային համապատասխան դաշտերում: Նոր բառերի յուրացումն ու մտապահումը տեղի են ունենում շատ արագ, որովհետև աշակերտը սկսում է դրանց միջոցով բացահայտել, ճանաչել աշխարհը, ծանոթանալ առարկաներին, երևույթներին, պատմական փաստերի ու իրադարձություններին և այլ հասկացությունների, որի արդյունքում սովորում է դրանց անվանումը՝ հարստացնելով իր մտահորիզոնն ու ինտելեկտը: Բառապաշարի հարստացման միջոցով ձևավորվում են նաև աշակերտի աշխարհընկալումն ու աշխարհայացքը, քանի որ հասկացությունները գաղափարներից սերված վերացարկումներ են, իսկ գաղափարները անցումային օղակ են օբյեկտիվ իրականության իրողությունների /առարկաներ, երևույթներ, հատկանիշներ /և նրանց անվանում հասկացությունների միջև.այսինքն՝ մենք ունենք **օբյեկտիվ իրողություն - նրա ճանաչում՝ գաղափար** / գաղափարը մեկ առանձին առարկայի ճանաչումն է, որին դեռևս հատուկ չէ այն ընդհանրացումը, որն ընկած է հասկացության հիմքում/ -**գաղափարի ամրակայում գիտակցություն մեջ որպես հասկացություն-հասկացության նշույթավորում՝ նշան, այն է՝ բառ** /շղթան:[1]

Իտալացի մանկագիր Ջ. Ռոդարին իր «Ստեղծագործական երևակայության քերականություն» գրքում գրում է, որ «եթե լճակի մեջ քար ենք նետում, ջրի վրա համակենտրոն շրջաններ են առաջանում»[2], որոնք տարբեր հեռավորությունների վրա՝ թե՛ լայնքով, թե՛ խորությամբ, կատարում են տարբեր իրադարձություններ և միկրոիրադարձություններ: «Այդպես էլ պատահաբար մարդու գլուխը մտած բառը լայնքով ու խորությամբ ալիքներ է տարածում, հակազդեցությունների անվերջ շղթա առաջացնում՝ հնչյուններ ու կերպարներ, զուգորդություններ ու հիշողություններ, պատկերացումներ ու երազանքներ մեջտեղ բերելով: Այս գործընթացը փորձի ու հիշողության, երևակայության ու ենթագիտակցականի հետ սերտորեն կապված է և նրանով է բարդանում,

---

[1] ***Հարությունյան Հ.Պ.***, *Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Պրակ Ա, Երևան , 2017, էջ 22*

[2] ***Ռոդարի Ջ.***, *Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, էջ 12*

որ ուղեղը կրավորական (պասիվ) չի մնում, անընդհատ միջամտում է, հսկում, ընդունում կամ մերժում, ստեղծում կամ քանդում»[1]: Բառերը ներգործում են մարդկանց վրա, դրանք ազդակներ են, որոնց միջոցով ձևավորվում են երեխայի պատկերացումները շրջապատող իրականության վերաբերյալ: Սակայն պետք է հաշվի առնել նաև, որ «ընթերցող երեխայի (ինչպես նաև լսող երեխայի) երևակայության վրա տեղեկությունն ամենևին էլ մեղրամոմի մեջ խրվող ասեղի սուր ծայրի պես չի գործում. այն բախվում է երեխայի եռանդուն անհատականությանը»[2]:

Բառապաշարի հարստացման համար կարելի է հանձնարարել «Սովորեցնում են աշակերտները» վերնագրով առաջադրանք: Այսպես՝ որոշակի հերթականությամբ (մատյանների համարներով, ընտրության տարբերակով և այլն) աշակերտներից յուրաքանչյուրը մայրենիի դասին ներկայացնում է նոր բառեր ու տերմիններ տարբեր բնագավառներից ու մասնագիտություններից, բացատրում դրանք, այնուհետև այդ բառերի ու տերմինների վերաբերյալ կատարվում են վարժություններ, դրանք կիրառվում խոսքում: Արդյունքի հասնելու համար այս աշխատանքը պետք է հետևողականորեն իրականացվի մայրենիի բոլոր դասաժամերին, լինի պարուրաձև՝ հնին ավելացնելով նորը:

Մոտավորապես պատկերացնենք այսպես. ուսուցիչն աշակերտի գիտակցության մեջ կառուցում է մի «մտապահարան», որի համապատասխան «դարակներում» աստիճանաբար տեղավորում է բառերը: Հետագայում աշակերտներն իրենց խոսքը կառուցելու համար համապատասխան «դարակներից» ընտրում են իրենց անհրաժեշտ այն բառերը, որոնց միջոցով լիովին կարտահայտեն իրենց հաղորդելիք միտքը: Բնականաբար, որքան հարուստ է աշակերտի «մտապահարանը», այնքան առատ բառանյութ կունենա արագ ու ճիշտ կառուցելու խոսքը, այնքան հեշտ կիրականցվի հաղորդակցումը: Նրա խոսքը կլինի հարուստ, բովանդակալից, ավելի հիմնավոր: Օրինակ՝ աշակերտներին հանձնարարենք խոսել որևէ թեմայի շուրջ (հայրենիքի, ընտանիքի, տարվա եղանակի, որևէ նշանակալից իրադարձության, պատմական փաստերի և այլն)՝ օգտվելով իրենց մտապահարանից: Աշակերտն ընտրում և «դարակից» հանում է այն համապատասխան բառերը, որոնք իրեն անհրաժեշտ են խոսքը կառուցելու համար: Կարող ենք համոզված ասել, որ եթե երեխայի «մտապահարանը» հարուստ է, իսկ բառերը՝ խմբավորված ու համակարգված, ուրեմն նա բավականին հեշտ կգտնի իրեն անհրաժեշտ բառերն ու արտահայտությունները, արագ և ճիշտ կձևակերպի իր միտքը: Այս դեպքում աշակերտը պետք է լավ տիրապետի լեզվին, որպեսզի իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնի ոչ թե լեզվական միջոցների, այլ բովանդակության վրա:

---

[1] *Նույն տեղում, էջ 12-13*

[2] *Նույն տեղում, էջ 171*

Միջառարկայական կապի շրջանակներում կարելի է կազմակերպել միջդասարանական կամ միջդպրոցական մրցույթ միևնույն տարիքային խմբերի միջև: Այն կանվանենք «Տերմինների հարուստ աշխարհում»: Նախապես պայմանավորվելով՝ տրվում են հանձնարարություններ՝ կապված տարբեր առարկաների տերմինների և հասկացությունների հետ, այնուհետև մրցության օրը հակառակորդ թիմերը կխոսեն այս կամ այն տերմինի կամ հասկացության մասին, իսկ մյուս կողմը պետք է գուշակի, թե ինչի մասին է խոսքը:

Կարելի է նաև կազմակերպել «Ո՞վ է գեղեցիկ խոսում» խորագրով մրցույթ: Նախապես մշակվում են խոսքի վերահսկման ու գնահատման չափանիշները (տե՛ս՝ աղյուսակ 1), սահմանվում է ժամանակահատված, և այդ ընթացքում բոլոր դասաժամերին, դասամիջոցներին և ընդհանրապես միմյանց հետ հաղորդակցվելիս թե՛աշակերտները և թե՛ ուսուցիչները հետևում են աշակերտների խոսքին, այնուհետև ժամկետի վերջում անցկացվում է քննարկում, և քննարկման արդյունքում հաղթող ճանաչվածը խրախուսվում է (մրցանակը ևս նախապես պայմանավորվում են. դա կարող է լինել, օրինակ, կիսամյակային գնահատականը 1 միավորով բարձրացնելը): Այս մեթոդի շնորհիվ աշակերտների մոտ կզարգանան իրենց խոսքին հետևելու հմտություններ և կարողություններ:

Աղյուսակ 1

	Խոսքի բովանդակությունը (ներկայացվող նյութի ամբողջականությունը) արտահայտող *գնահատման չափանիշները*	*Միավորը*
1	Հիմնական գաղափարի արտահայտումը	2
2	Խոսքի տրամաբանվածությունն ու հաջորդականության պահպանումը	2
3	Բառապաշարի հարստությունը	2
4	Նյութի պարզ ու մատչելի մատուցումը	1
5	Խոսքի արտահայտչականությունը	1
6	Ճիշտ շեշտադրումը	1
8	Սեփական տեսակետի արտահայտումը	1

Խոսքի զարգացման աշխատանքները միջառարկայական կապի շրջանակներում արդյունավետ կազմակերպելու համար կարելի է նաև կազմակերպել միասնական դաս, քանի որ ուսուցման գործընթացում այդ կապը կնպաստի նյութի առավել հիմնավոր յուրացմանը: Դասի ընթացքում ստանալով ավելի համակարգված գիտելիքներ նաև այլ բնագավառներից՝ աշակերտների մեջ կձևավորվեն գիտելիքների դիալեկտիկական միասնության վրա հիմնված ընդհանուր պատկերացումներ, նրանք գիտակցորեն կյուրացնեն նյութը, ինչն էլ կնպաստի մտածողության ու հիշողության զարգացմանը: Միասնական դասի շրջանակներում հնարավորություն կստեղծվի տեղեկություն ստանալ տարբեր

աղբյուրներից, ինչը կնպաստի աշակերտի կողմից գիտելիքի համակողմանի յուրացմանը և մտահորիզոնի ընդլայնմանը:

Գծապատկեր 1



Մայրենի լեզուն կենտրոնական տեղ է զբաղեցնում խոսքի զարգացմանն ուղղված աշխատանքներում, քանի որ նրա միջոցով է իրականացվում ճանաչողական գործընթացը, նրա միջոցով ենք սեր արթնացնում հենց մայրենի լեզվի նկատմամբ, ճանաչել տալիս համամարդկային արժեքները: Այն նպաստում է երեխայի ինտելեկտի, մտածողության, գիտակցության զարգացմանը նաև ուսումնական այլ առարկաների ժամանակ: Աշակերտները մայրենի լեզու են սովորում բոլոր առարկաների ուսուցման ընթացքում, հետևաբար խոսքի զարգացման հարցերը պետք է մտահոգեն բոլոր ուսուցիչներին: Հայերենով դասավանդող բոլոր ուսուցիչները պետք է ուշադրություն դարձնեն աշակերտի խոսքի մաքրությանն ու կանոնավորությանը, իսկ օտար լեզվով դասավանդողները պետք է ուշադիր լինեն, որ բնագիրը թարգմանելիս աշակերտները խոսքը կառուցեն ճիշտ ու հստակ: Առանց մյուս առարկաների ուսուցիչների աջակցության դժվար կլինի աշակերտների խոսքի բազմակողմանի զարգացումը, իսկ այս հարցում մենք դեռևս շատ անելիք ունենք, որովետև դասավանդման փորձը ցույց է տալիս, որ ոչ բոլոր ուսուցիչներն են բավարար աշխատանք կատարում աշակերտների խոսքի զարգացման ուղղությամբ: Այն հիմնականում մտահոգում է լեզուների և գրականության ուսուցիչներին: Այդ բացը խոչընդոտում է աշակերտների առաջադիմությունը, մտածողության այնպիսի որակների զարգացումը, որոնք ձևավորվում են մաթեմատիկայի, ֆիզիկայի, բնագիտության, պատմության և այլ ուսումնական առարկաների յուրացման շնորհիվ: Չէ՞ որ յուրաքանչյուր առարկա ունի իր լեզուն, «մտածողության մեխանիզմը», բառապաշարը և այլ մտավոր կարողություններ, որոնք նպաստում են

աշակերտի ընդհանուր մտավոր զարգացմանը: Օրինակ՝ պատմության դասընթացի շնորհիվ ձևավորվում է կապակցված խոսք, որովհետև այն հարուստ նյութ է տալիս խոսելու և պատմելու համար, մաթեմատիկան ձևավորում է տրամաբանված և դատողական խոսք, որովհետև այն փաստերի և դատողությունների միասնական ամբողջություն է, բնագիտության և աշխարհագրության շնորհիվ ձեռք է բերվում նկարագրական խոսք կառուցելու հմտություն, արվեստի միջոցով ձևավորվում են աշակերտի գեղագիտական պատկերացումները, համադրվում իրականությունն ու մարդկային միտքը և այլն:

Այսպիսով՝ աշակերտի խոսքի զարգացումը կլինի լիարժեք, եթե այն դառնա ոչ միայն մայրենիի, այլ նաև մյուս առարկաների, ուսուցչական ողջ կոլեկտիվի նպատակը, եթե դպրոցում հաստատվի խոսքի ընդհանուր և միասնական համակարգ, և այն հետևողականորեն պահպանվի ուսումնական ողջ գործընթացի ժամանակ: Սոցիալական աշխարհը, որտեղ ապրում է երեխան, չափազանց բարդ ու հարուստ է, և երեխայի համար հեշտ չէ հասկանալ, թե որքան ջանք ու աշխատանք է ներդրվել այն կառուցելու համար: Ուստի երեխայի գիտակցությանը պետք է հասցնել այն ամենը, ինչը նպաստել է այսօրվա հասարակության ձևավորմանը: Երեխան պետք է սովորի, իմանա, թե ինչպես է մարդն սկսել հասկանալ իր կարիքները և քայլ առ քայլ հետևելով մարդկության զարգացման գործընթացին՝ ծանոթանա մարդկության մտքի պատմությանը: Նա պետք է իմանա, թե ինչպես է մարդը սովորել մտածել, ստեղծել, այնուհետև համբերատար ձևափոխել ու բարելավել իր կյանքի պայմանները, հասել գիտակցական այսօրվա մակարդակին, ստեղծել բարոյական արժեքներ: Եվ որպեսզի կրթենք և դաստիարակենք մտածող և գիտակից սերունդ, որն ունենա մարդկային բարձր արժեհամակարգ, լայն մտահորիզոն և բարձր ինտելեկտ, հետևաբար նաև խոսք կառուցելու և հաղորդակցվելու կարողություն, անհրաժեշտ է ճիշտ և նպատակային կազմակերպել ուսուցման գործընթացը, սովորողների մեջ զարգացնել կյանքի ճանաչողության ընդունակությունները, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ստեղծագործական կարողությունները բոլոր դասերին և դասի յուրաքանչյուր փուլում: Դրա համար պետք է լավ ճանաչել սաներին, նրանց անհատականությունն ու հետաքրքրությունների շրջանակը: Ուսուցիչները պետք է հստակ պատկերացնեն, թե ի՞նչ են դաստիարակում երեխային դաստիարակելիս, օգնեն նրանց՝ ձևավորելու սեփական ընկալումը աշխարհի, տարբեր երևույթների մասին: Դրան պետք է նպաստեն դպրոցական բոլոր առարկաները՝ իրենց շրջանակներում առաջադրվող գիտելիքների միջոցով աշակերտի գիտակցության մեջ կառուցելով աշխարհի պատկերը, իսկ աշակերտներն էլ իրենց հերթին, սովորելով ուսումնական առարկաները և համադրելով ստացած գիտելիք–պատկերները միմյանց հետ, ամրապնդում և սեփականացնում ենք դրանք՝ կազմելով աշխարհի վերաբերյալ սեփական պատկերացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դյուի Ջ., Դպրոցը և հասարակությունը, «Դպիր» մանկավարժական հանդես, Երևան, 2008, 88 է:
2. Մանուկյան Ա. Ս., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976, 347 էջ:
3. Պետրոսյան Հ. Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, II, Երևան, 2008, 268 էջ:
4. Ռոդարի Ջ., Ստեղծագործական երևակայության քերականություն, Երևան, 1995, 224 էջ :
5. Гулевич О. Е., Развитие речи учащихся, Москва, 1956. 184с.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը: